ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 մարտի 2014 թվականի N 39 - Ա

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքնի 15-րդ հոդվածով, <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով , համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 18-ի <<Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին>> N1180-Ն ու 2010 թվականի հունիսի 24-ի <<Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման կարգը հաստատելու մասին>> N824-Ն որոշումների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարական ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետի 27.03.2014թ. N20/221 գրությունը՝ **որոշում եմ՝**

1. Հաստատել՝ արտակարգ իրավիճակների ժամանակ Հայստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության տարահանման պլանը ՝ համաձայն հավելվածի:

2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

2014թ. մարտի 28
ք. Կապան